Եղիշե Չարենց

Երբ էս հին աշխարհը մտա...

Երբ էս հին աշխարհը մտա ես տաղով, սազով-քամանչով
Ի՞նչ պիտի անե աշխարհում էս անմիտ-անճարը, ասին:

Սակայն երբ խալխի քեֆերին ես անուշ տաղերս ասի՝
Ամառվա մրգերի նման անո՛ւշ է քո բառը, ասին:

Բայց խալխի անսիրտ քեֆերին ես տխուր, մենակ մնացի,
Ուզեցի թողնեմ-հեռանամ՝ հպարտ է ու չար է, ասին:

Եվ սրտիս ցավից հուսահատ ես մե թաս օղի խմեցի,
Չարենցը ցնդած-գինեմոլ, հարբեցող-հիմար է, ասին:

Ու ձմռան բուքերի միջին ես բոբիկ ու մերկ մնացի.
Դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մեջ ամառ է, ասին:

Ասի թե՝ մա՛րդ եք ախար դուք, չե՞ք տեսնում մարմինս ծվատ.
Չարենցի հոգին տաղերում աննկուն, համառ է, ասին:

Խնդացին, քրքջացին միայն, որ այդպես մնացել եմ մերկ,
Դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին: